Կրթություն առանց սահմանի

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ Արմավիրի մարզ Դալարիկի Հ.Հովհաննիսյանի անվան թիվ 1 միջն դպրոց

Առարկա՝ Երաժշտություն

Թեմա՝ Մեթոդները որպես միջոց ստեղծագործական ունակությունների զարգացման

Վերապատրաստող՝ Է. Հովհաննիսյան

Ուսուցիչ՝ Թ. Ալեքսանյան

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն 3

Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա՝ ծրագրի Նպատակն ու խնդիրները: 3

Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման Մեթոդիկան առաջին դասարանում.....7

Եզրակացություն 13

Գրականություն ցանկ 15

Ներածություն

՝Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա՝ ծրագրի նպատակն ու խնդիրները: Մտավոր և հոգևոր ներուժի բացահայտում, մարդկային լավագույն հատկանիշների ձևավորում, ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացում:

1-ին թեմա - ՝Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա՝ հասկացությունների էությունը:

Երաժշտության դասավանդման տեսությունը որպես գիտելիքների, հասկացությունների, օրինաչափությունների համակարգ: Նրա սերտ կապը մանկավարժության հոգեբանության ֆիզիոլոգիայի և մյուս գիտությունների հետ: Երաժշտության դասավանդման մեթոդիկան որպես սովորողների դաստիարակության, զարգացման, ուսուցման և այլ օրինաչափությունների համակարգ, նրա սերտ կապը դասավանդման տեսության հետ: Երաժշտական գեղագիտությունը որպես երաժշտական դաստիարակության մեթոդաբանական հիմք: Նրա կապը երաժշտագիտության և գեղարվեստական դաստիարակությունը ապահովող արվեստի մյուս տեսակների հետ: Դիտման և հարցման մեթոդները և մանկավարժական գիտափորձը: Երաժշտական դաստիարակության հայեցակարգը և արվեստի օրինաչափությունները:

2-րդ թեմա - Երաժշտության ժամանակակից դասին ներկայացվող պահանջները և երաժշտության ուսուցչի նախապատրաստումը:

Երաժշտության դասի բովանդակությունը և կառուցվածքը տարբեր ժամանակաշրջաններում, երաժշտության դասը որպես դպրոցական առարկա, երաժշտության դասի առանձնահատկությունները, նրա կապը դպրոցական մյուս առարկաների հետ, ընդհանրությունը և տարբերությունը: Դիդակտիկայի ընդհանուր սկզբունքների կիրառումը երաժշտության դասին: ՝Զգացմունքայնության և գիտակցականության՝ սկզբունքների նշանակությունը: Երաժշտության ուսուցիչը՝ որպես դպրոցում երաժշտական աշխատանքների կազմակերպիչ: Երաժշտությանառարկայի ծրագիրը որպես երաժշտության ուսուցչի կողմնացույց:

Մանկավարժական պրակտիկան որպես երաժշտության ուսուցչի մասնագիտության կողմնորոշիչ:

3-րդ թեմա – Սովորողների երաժշտական գործունեության հիմնական տեսակների

Բնութագիրը և նրանց փոխկապակցվածությունը երաժշտության դասին: Երեխաներին

Երաժշտությամբ հետաքրքրելու ուղիները:

Ունկնդրում, երգեցողություն, երաժշտառիթմական շարժում, նվագ մանկական

Նվագարաններով, իմպրովիզացիա երաժշտական տեսակների էությունը, նրանց

Փոխկապակցվածությունը և նշանակությունը համալիր դասի կազմակերպման

Գործում:

4-րդ թեմա – Երաժշտության ծրագրի հայեցակարգի սկզբունքների և մեթոդների

Համառոտ բնութագիրը:

Երաժշտության նոր ծրագրերի թեմատիկ կառուցվածքը, նրա բնութագրումը և

Տարբերությունը նախորդ ծրագրերից, նոր ինտերակտիվ մեթոդների կիրառումը

Երաժշտության դասին:

1-4-րդ թեմաներն ամփոփող սեմինարի հարցեր և առաջադրանքներ.

• ՝Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա՞ դասընթացի

Նպատակը և խնդիրները, նրա կապը մյուս առարկաների և

Մանկավարժական պրակտիկայի հետ: ՝Տեսություն և մեթոդիկա՞[1.էջ, 34]

Հասկացությունների էությունը:

• Երաժշտությունը որպես արվեստի տեսակ և նրա դաստիարակչական

Նշանակությունը:

• Ժամանակակից երաժշտության ուսուցչին ներկայացվող պահանջները,

Նրա հոգեբանա-մանկավարժական և երաժշտա-մեթոդական

Պատրաստվա¬ծությունը:

• Ուսուցիչը որպես հետազոտող:

• Երաժշտության դասի նմանությունը և տարբերությունը դպրոցի մյուս

Առարկաներից:

• Դիդակտիկայի ընդհանուր սկզբունքների իրականացումը երաժշտության

Դասին:

Երաժշտության դասի հիմնական ‘բաղադրամասերը’ նրանց փոխկապակցվածությունը և դերը միասնական, համալիր դաս ստեղծելու գործընթացում:

• Խմբային պարապմունքի պայմաններում անհատական մոտեցման ուղիները:

• Երաժշտության ծրագրերի հիմնական սկզբունքների և մեթոդների իրականացումը երաժշտության դասին:

5-րդ թեմա - Հարաբերական և բացարձակ սոլմիզացիայի ստեղծման և զարգացման պատմական ակունքները: Լսողության զարգացման հարաբերական (լադային) և բացարձակ (տոնայնական) սոլմիզացիայի տեսությունը: Հարաբերական և բացարձակ սոլմիզացիայի մեթոդների կիրառումը երաժշտության դասերին:

Գվիդո դը Արեցցոյի գործունեությունը հարաբերական և բացարձակ սոլմիզացիայի ստեղծման և զարգացման գործում:

6-րդ թեմա - Երաժշտական մանկավարժական միտքը Հայաստանում (պատմական ակնարկ):

Երաժշտական դաստիարակությունը Հին Հայաստանում, քրիստոնեության ընդունումը և գրերի գյուտի ստեղծումը: Երաժշտական դաստիարակությունը միջնադարում և ուշ միջնադարում: 7-րդ թեմա - Երաժշտական մանկավարժական միտքը Հայաստանում 1920 թվականից մինչև մեր օրերը:

Երաժշտական ուսումնամեթոդական նոր գրականության ստեղծումը և բնութագիրը (դասագիրք, մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, ֆոնո-քրեստոմատիա CD,դիտողական պարագաներ և այլն):

5-7-րդ թեմաներն ամփոփող սեմինարի հարցեր և առաջադրանքներ. [4.էջ 11]

• Հարաբերական (լադային) լսողության զարգացման առանձնահատկությունները:

• Բացարձակ լսողությունը որպես օժտվածություն: Նրա առանձնահատկությունները:

• Հարաբերական սոլմիզացիայի մեթոդի դերը և նշանակությունը սովորողների երաժշտական լսողության զարգացման գործընթացում:

• Հարաբերական և բացարձակ սոլմիզացիայի ժամանակակից պահանջները

• Երաժշտական մտածողության զարգացման երկու հիմնական կողմերը:

• Ռիթմական դաստիարակություն՝ նեղ և լայն իմաստներով:

• Դիդակտիկական միջոցներ:

• Ստեղծագործական երևակայության զարգացում:

• Երաժշտական դաստիարակության դրվածքը հայկական ‘դպրոցներում’ վաղ միջնադարից մինչև 1920 թվականը:

• Հայկական նոր ձայնագրության ստեղծումը:

• Երաժշտական դաստիարակության բովանդակությունը Խորհրդային Հայաստանում մինչև 1960 թվականը, ապա մինչև մեր օրերը:

• Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և երաժշտական ուսումնամեթոդական նոր գրականության ստեղծումը Հայաստանում:

8-րդ թեման - Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացման հարցերը:

Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացման հարցեր: Երաժշտական մտածողության երկու հիմնական կողմերը՝ ռիթմական և լադի աստիճանների զգացողություն: Ռիթմական դաստիարակության լայն և նեղ իմաստները: Ռիթմական դաստիարակության մեթոդիկան: Լադամեղեդային մտածողության զարգացման մեթոդիկայի մասին: Դիդակտիկական միջոցներ: Հարաբերական սոլմիզացիա, լադի ձայնաստիճանների ձեռքի նշաններ, լադի հնչյունաշարերի գրաֆիկական նշանակում, հարաբերական նոտագրություն, շարժական նոտա, լադային կարևորագույն ինտոնացիաների յուրացում՝ նվագ՝ մեղեդիական նվագարաններով: Բացարձակ սոլֆեջիո, իմպրովիզացիա:

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

• Ծանոթանալ 1-ից 16-րդ պլակատների բովանդակությանը և կատարել այն: Տեմպ, զարկում, մասեր, ուժեղ և թույլ մասեր, երկտակտանի[2.էջ 43]

ֆրազաներ, ռիթմ, երգերի ռիթմերի կատարում (միաձայն), դո, րե, մի

հնչյունաշար, ռիթմական երկձայնություն և եռաձայնություն, երաժշտական հարցեր և պատասխաններ, երգել լադի աստիճանները պատկերող ձեռքի նշաններով (սոլ-ֆա-մի-րե-դո և դո-րե-մի-ֆա-սոլ ձայնաստիճանների աստիճանական շարժումով, տերցիային թռիչքներով):

• Երաժշտական ռիթմի էությունը, ռիթմի մասին լայն իմաստով (տեմպ, զարկում, չափեր, տակտեր, ֆրազներ) ռիթմի մասին՝ նեղ իիմաստո (ռիթմական տևողությունների բառային և վանկային նշանակումները):

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

9-րդ թեմա – Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման Մեթոդիկան առաջին դասարանում:1-ին դասարանցիների հոգեբանա-ֆիզիկական բնութագիրը՝ շարժունակությունը, շուտ Հոգնածությունը, ուշադրության սահմանափակվածու¬յունը (8-10 րոպե), լավ Հիշողությունը, շուտ հրապուրվելու և շուտ ձանձրանալու հատկությունը և այլն: Երեխաների մեջ սեր և հետաքրքրություն առաջացնել երաժշտության հանդեպ, Զգացմունքային անդրադարձ տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործությունների Նկատմամբ, զարգացնել երաժշտական ընդունակությունները, ռռիթմակա Զգացողությունը, լադային լսողությունը, արտահայտչական միջոցները զգալու Կարողությունը, երաժշտությունը ունկնդրելու և ինքնուրույն հետևություններ անելու Հմտությունը, զգալ կյանքի և երաժշտության կապի առկայությունը, երաժշտության Բովանդակությունը, կերպարները ընկալելու կարողությունը, երաժշտության Անհատական, խմբային կատարման հմտությունը (երգել, նվագել, պարել, ստեղծագործել և այլն): Լսել իր և ուրիշների երգեցողությունը, ձայները, երգել բնական ձայնով, առանց լարվելու, ազատ և արտահայտիչ: Ծանոթացնել երգեցողության կանոններին, հետևել ուսուցչի ձեռքերի շարժումներին (խմբավարական), զարգացնել ճիշտ երգչային շնչառություն վերցնելու և այն խնայողաբար օգտագործելու հմտությունը: Լսողության մեջ ամրակայել մաժոր և մինոր լադերի դո-ռե-մի, ռե-մի-ֆա, մի-ֆա-սոլ տրիքորդների ձայնաստիճանները երգել ձեռքի նշաններով, ծանոթացնել ռիթմական տևողությունների բառային և վանկային նշանակումներին (քայլ, վազել, թա, թի-թի), ռիթմական նվագարաններով նվագելու ձևերին: [6.էջ 76]

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

• Դասերի պլանավորում քառորդների և թեմաների:

• Ստեղծագործությունների ունկնդրում և վերլուծություն:

• Երգերի կատարում և վերլուծում:

• Միաձայն և բազմաձայն ռիթմական նվագակցությունների կատարում:

• Երգեցողություն լադի ձայնաստիճանները պատկերող ձեռքի նշաններով դո, ռե,

մի, ֆա, սոլ հնչյունաշարում, ԴՈ և ՐԵ տոնիկաներով:

10-րդ թեմա - Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման մեթոդիկան 2-րդ դասարանում: Բացահայտել ընդհանուր և երաժշտական ընդունակությունները, գիտելիքների, ունակությունների և հմտությունների առկայությունը, մաքուր և ոչ մաքուր երգողներին, շարունակել աշխատանքը ճիշտ երգեցողության, ճիշտ շնչառության վրա: Սովորեցնել մեկ շնչառությամբ կատարել 2-4 տակտերից կազմված ֆրազաներ: Կատարելագործել ձեռքի նշաններով երկձայն երգելու կարողությունը, հմտությունը: Կատարել միաձայն և բազմաձայն ռիթմիկան նվագակցություններ: Նոտաներով երգել անցած ձայնաստիճանների սահմաններում երգեր, վարժություններ: Զարգացնել հարմոնիկ լսողությունը: Տալ երաժշտատեսական նոր գիտելիքներ 2-րդ դասարանի ծրագրից: Զարգացնել ռիթմական նվագարաններով նվագելու հմտությունները,

ստեղծագործական կարողությունները: Սովորեցնել ռիթմական և պարային նոր շարժումներ, պարեր: Ավելի խորացնել հետաքրքրությունը երաժշտությոան հանդեպ, երաժշտության դասը: Գործնական աշխատանքի բովանդակությունը.

• Դասերը պլանավորել ըստ քառորդների և թեմաների: • Ընդհանրացնել 1-ին և 2-րդ դասարանցիներին հաղորդած գիտելիքները,

ձեռք բերած հմտությունները, ճշտել ծրագրային նյութը, նոր թեմաները:

• Ծանոթանալ 2-րդ դասարանի դասագրքի բովանդակությանը և

կառուցվածքին:

• Ցուցադրել և կատարել դասի բաղադրամասերը ուսանողների

անմիջական մասնակցությամբ:

• Ցույց տալ երգեցողության և երաժշտության ունկնդրման փոխադարձ

կապը երաժշտառիթմական, նվագ մանկական նվագարաններով և

իմպրովիզացիա տեսակների հետ:

11-րդ թեմա - Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման

մեթոդիկան 3-րդ դասարանում:

Ի հայտ բերել 3-րդ դասարանցիների երաժշտական զարգացման մակարդակը:

Ամրակայել 1-ին և 2-րդ դասարաններում ստացված գիտելիքները և հմտությունները:

Ճշտել նոր նյութը և դասընթացի բովանդակությունը, աշխատանքային մեթոդները:

Շարունակել երաժշտական լսողության զարգացման աշխատանքները, ուշադրություն

դարձնել մասնավորապես լադային զգացողության, հարմոնիկ լսողության զարգացման

վրա: Լյա-սի-դո-րե-մի-ֆա-սոլ-լյա-սի-դո հնչյունաշարերը երգել ձայնաստիճանների

տարբեր փոխհարաբերությամբ՝ լայն օգտագործելով նոտագրությունը և լադի

ձայնաստիճանները պատկերող ձեռքի նշանները: Մեծ ուշադրություն դարձնել

սովորողների հարմոնիկ լսողության զարգացմանը, երկձայն երգեցողությանը:

Զարգացնել սովորողների երգչային ձայնը, երգերը ճիշտ կատարելու հմտությունը (17-33 պլակատներ):

Ակտիվացնել ստեղծագործական ունակությունները, մասնավորապես նվագելու և

երգերի մեղեդային և ռիթմական նվագակցություններ ստեղծելու գործընթացում:

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

• Դասերը պլանավորել ըստ քառորդների և թեմաների:

• Ընդհանրացնել նախորդ դասարաններում ձեռք բերածը և այն կապել

նորնյութի հետ:

• Ծանոթանալ 3-րդ դասարանի դասագրքի բովանդակությանը և կառուցվածքին:

• Գործնական աշխատանքում ցույց տալ ձեռքի նշաններով և նոտաներով երգեցողության տարբերությունը և կատարման հնարավորությունները:

• Խորացնել սովորողների երաժշտական գործունեությունը երգելու և նվագարաններով կատարելու կարողությունները:

Սեմինար պարապմունքի և զեկուցումների թեմաներ.

• 1-ից 3-րդ դասարանների ծրագրի բովանդակությունը և թեմատիկայի վերլուծությունը:

Տարրական դասարանների սովորողների տարիքային առանձնահատկությունները, դրանց առկայությունը ուսումնա-դաստիարակչական աշխատանքների մեթոդիկայում:Ընդհանուր դիդակտիկան սկզբունքների օգտագործումը երաժշտության դասերին՝ կապված սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ՝ տարբեր դասարաններում:

12-րդ թեմա - Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման մեթոդիկան 4-րդ դասարանում:

4-րդ դասարանցիների բնութագիրը, տարիքային առանձնահատկությունները:

Ծանոթացնել 4-րդ դասարանի դասագրքի բովանդակությանը: Շարունակել աշխատանքը լսողության, երաժշտության ընկալման, ստեղծագործական ընդունակությունների ձեռք բերման վրա: Լսողության մեջ ընդհանրացնել օկտավային

մինոր և մաժոր լադերի հնչյունաշարերը լյա-սի-դո-րե-մի-ֆա-սոլ-լյա (մինոր), դո-րե-մի-ֆա-սոլ-լյա-սի-դո (մաժոր): Այդ լադերի ձայնաստճանները կատարել հաջորդաբար,

ինտերվալային թռիչքներով, լայն օգտագործելով ձեռքի նշանները և նոտագրությունը

(17-33 պլակատներ):

Երգել երկձայն երգեր: Զարգացնել լադային և հարմոնիկ լսողությունը:

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

• Կազմել դասի պլան՝ ելնելով քառորդների թեմաներից, ցույց տալ ծրագրի նյութի

նպատակը, ուսուցողական- դաստիարակչական հնարավորությունները: Երգերը[2.էջ. 54]

կատարել նոտաներով, առանձին-առանձին, երկձայն երգերի բաժանելով:

• Լսել ծրագրային ստեղծագործությունները և կատարել վերլուծական աշխատանք, որոնք կարող են ակտիվացնել սովորողների երևակայությունը և ընկալման հնարավորությունները:

13-րդ թեմա – Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և դասավանդման Մեթոդիկան 5-րդ դասարանում:

5-րդ դասարանում երաժշտական դաստիարակչական աշխատանքների նպատակը և Խնդիրները:

Բացահայտել 5-րդ դասարանցիների հոգեբանա-ֆիզիոլոգիական տարիքային Առանձնահատկությունները, երաժշտական զարգացման մակարդակը և այդ բոլորը Նկատի առնել սովորողների հետագա երաժշտական դաստիարակչական Աշխատանքները կազմակերպելու գործընթացում: Մասնավորապես ուշադրության Կենտրոնում պահել 5-րդ դասարանցիների երաժշտական ընկալման զարգացման և Երգչային ձայնի փոփոխման վրա, քանի որ թե ընկալումը և թե երգչային ձայնը և Ընդհանրապես այդ տարիքում նրանց հետաքրքրությունների շրջանակը բուռն Փոփոխության և զարգացման է ենթարկվում:

Նոր որակ է ստանում նրանց վերաբերմունքը երաժշտության դասի հանդեպ, առաջ են Գալիս բնավորության նոր գծեր: Սովորողները ծանոթանում են արվեստի տեսակներին, Դրանց փոխկապերին և փոխազդեցություններին:

Նոր որակ է ստանում նաև 5-րդ դասարանում դասավանդող ուսուցչի աշխատանքը: Նա Պետք է լավ իմանա ոչ միայն իր առարկան, այլ նաև կարողանա միջառարկայական Կապեր ստեղծի գրականության, կերպարվեստի, պատմության առարկաների և Արվեստի մյուս տեսակների միջև: Քանի որ այդ դասարանի երաժշտության Թեմատիկան այդ է պահանջում:

Զարգացնել երկձայն և մատչելի եռաձայն երգեցողության կարողությունները, Նոտաներով երգելու հմտությունները, երաժշտությունը ընկալելու և ինքնուրույն Դատողություններ անելու ունակությունները:

Զարգացնել լադային և հարմոնիկ լսողությունը: Նրանց լսողության մեջ ամրակայել Մաժոր և մինոր բնույթի լադերը, ինչպես դիատոնիկ, այնպես և ձևափոխված Աստիճանների զգացողությունը: Երգել լադի ձայնաստիճանները պատկերող ձեռքի Նշաններով: Երաժշտության դասին օգտագործել ռիթմական և մեղեդային Նվագարաններ: Զարգացնել նաև սովորողների ստեղծագործական կարողությունները:

Ծանոթացնել 5-րդ դասարանի դասագրքի բովանդակությունը:

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

Կազմել դասերի պլան՝ նշելով դասի նպատակը, խնդիրները, առաջարկվող

Ծրագրի ուսուցողական և դաստիարակչական նպատակաուղղվածությունը, ինչպես

Նաև աշխատանքի մեթոդներն ու ձևերը:

Ցույց տալ երաժշտության և գրականության, երաժշտության և պարարվեստի,

Երաժշտության և կերպարվեստի, երաժշտությունը թատրոնում և կինոյում թեմաների

Փոխկապակցվածությունը կոնկրետ օրինակներով և բնութագրել այն:

Նոր երաժշտական նյութի հիման վրա զարգացնել սովորողների երաժշտության

Ընկալման, նոտաներով երգեցողության կարողությունները այդ դասարանի ծրագրային

Պահանջների սահմաններում:

Կազմակերպել դաս-համերգներ, ցուցադրել սովորողների ձեռք բերած, թե

Տեսական գիտելիքները և թե կատարողական հմտությունները (երգերի և

Նվագարանային ստեղծագործությունների կատարում, ռիթմական և մեղեդային

Նվագարանների օգտագործում):

14-րդ թեմա – Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և

Դասավանդման մեթոդիկան 6-րդ դասարանում:

Բնութագրել 6-րդ դասարանի սովորողների տարիքային հոգեբանության

Առանձնահատկությունները: Սովորողների երգչային ձայնի փոփոխման (մուտացիայի)

և զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները պահել ուշադրության

կենտրոնում: Ստեղծել պայմաններ, որպեսզի ավելի բացահայտվեն այդ դասարանում

սովորողների ինքնուրույնությունը, ակտիվությունը, երաժշտության ծրագրի

պահանջների իրացման, մասնավորապես երաժշտական ժանրերի, կերպարների

ակտիվ ընկալման և ինքնուրույն հետևություններ անելու գործընթացում:

Զարգացնել մեղեդային և հարմոնիկ լսողությունը, նոտաներով երգելու կարողությունը:

Տարվա ընթացքում դաս-համերգների միջոցով բացահայտել սովորողների

Երաժշտական զարգացման մակարդակը: Ծանոթացնել 6-րդ դասարանի դասագրքի

Բովանդակությունը:

Գործնական աշխատանքների բովանդակությունը.

Կազմել դասի պլան, հաշվի առնել ոչ միայն նպատակը, խնդիրները, այլև աշխատանքի

Ձևերն ու մեթոդները:Ուշադրություն դարձնել սովորողների երգչային ձայնիզարգացման վրա՝ հաշվի առնելով ձայների փոփոխման շրջանում տղաների

Երգեցողությանը մասնակից դարձնելու նպատակահարմարությունը:

15-րդ թեմա – Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և

Դասավանդման մեթոդիկան 7-րդ դասարանում:
Բացահայտել 7-րդ դասարանցիների տարիքային հոգեբանական
Առանձնահատկությունները: Ինքնուրույն մտածողություն և գործունեություն
Դրսևորելու ձգտումը: Ձևավորել երաժշտության մեջ ճիշտ կողմնորոշվելու, ճիշտ
Գնահատելու ունակությունը՝ տարբեր ժանրերի և տեսակների երաժշտության
Ունկնդրումից հետո (դասական, էստրադային, ջազային, ժողովրդական և այլն):
Սովորողների մեջ ձևավորել այն զգացումը, որ երաժշտությունը և կյանքը գտնվում են
Փոխկապակցվածության, փոխազդեցության մեջ: Ծանոթացնել 7-րդ դասարանի
Դասագրքի բովանդակությունը:
Սեմինար և գործնական աշխատանքների թեմաներ.
• Կազմել դասի պլան՝ մանրամասն նշելով դասի ընթացքը,
Ստեղծագործությունների վերլուծությունը: Երգերը բնութագրել, կատարել
Հուզական, գեղարվեստական, ստեղծել երաժշտական համապատասխան
Կերպարներ: Երգչային ձայնի փոփոխման շրջանում սովորողների նկատմամբ
Լինել ուշադիր:
• Լսողությամբ որոշել լադերի ձայնաստիճանները և երգել ձեռքի նշաններով:
• Երգել նոտաներով, ուշադրություն դարձնել ձևափոխված ձայնաստիճանների
Ճիշտ վերարտադրման վրա:
• Կատարվող երգերի և ունկնդրվող ստեղծագործությունների համար ստեղծել
Ռիթմական և մեղեդային նվագակցություններ:
• Բնութագրել 5-ից 7-րդ դասարանցիների տարիքային հոգեբանական
Առանձնահատկությունները:
• Աղջիկների և տղաների երգչային ձայնի փոփոխման հիմնական հատկանիշները
և ձայնի զարգացման մեթոդներն ու ձևերը:
• 5-7-րդ դասարաններում սովորողների հետաքրքրությունների ձևավորման
Մեթոդները: [7 էջ 38]
• Արվեստների փոխակապվածության բնութագիրը, երաժշտության դասի
Բովանդակությունը և կառուցվածքը:
5-7-րդ դասարանների թեմաների բնութագրումը, երաժշտական նյութի
ենթակայությունը թեմատիկային:

Եզրակացություն

Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման պահանջները ներկայացված են երեք մակարդակներում՝ նվազագույն, միջին և բարձր: Այս մակարդակները միմյանց հետ հարաբերվում են հետևյալ սկզբունքով՝ նվազագույնը՝ միջինի, միջինը՝ բարձրի մեջ ամփոփելով:

Նվազագույն չափանիշի պահանջներն են.

• ուսանողը դասընթացը յուրացրել է ոչ բավարար,

• չի կարողանում վերարտադրել հիմնական բովանդակությունը,

• չի կարողանում ինքնուրույն հետևություններ անել,

• չի ապահովում դասընթացի (առարկայի) գործնական, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքի գծով նախատեսված պահանջները:

Միջին չափանիշի պահանջներ.

• ուսանողը յուրացրել է դասընթացի առանձին մասեր,

• կարողանում է ինքնուրույն հետևություններ անել,

• կարողանում վերարտադրել դասընթացի (առարկայի) բովանդակության մի մասը,կատարել է դասընթացի (առարկայի) գործնական, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքի գծով պահանջվող աշխատանքների մի մասը:

Բարձր չափանիշի պահանջներ.

• ուսանողը դասընթացը յուրացրել է ամբողջությամբ,

• կարողանում է վերարտադրել դասընթացի բովանդակությունը ամբողջությամբ,

• կարողանում է ինքնուրույն հետևություններ անել,

• կատարել է դասընթացի (առարկայի) գծով պահանջվող աշխատանքները:

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր հարցման, գործնական և սեմինար,

ինքնուրույն ստուգողական աշխատանքի, ստուգարքի, քննության, ռեֆերատի և այլնի միջոցներով:

Ծրագրի բովանդակության մեջ են մտնում նաև հանրակրթական և բարձրագույն դպրոցի համար ստեղծված երաժշտության առարկայի չափորոշիչները, ծրագիրերը, դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, երաժշտական ստեղծագործությունների քրեստոմատիան, ֆոնոքրեստոմատիան (հնչող երաժշտությունը), դիտողական պարագաները՝ աղյուսակներ, պլակատներ, ռիթմական և ինտոնացիայի քարտեր, ֆիլմեր, տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաներ, տեսալսողական սարքեր և այլն:

Գրականություն ցանկ

1. Մազմանյան Մ. Ս., Երաժշտության դասավանդման մեթոդիկա, Երևան, 1969

2. Մազմանյան Մ. Ս., Խմբավարական արվեստ, Երևան, 1980

3. Մազմանյան Մ. Ս.,՝Ճուտիկ՝ մանկական օպերա, Երևան, 1984

4. Յուզբաշյան Յու.Վ., Նոտագրության ուսուցումը հարաբերական և բացարձակ մեթոդներով, 25 պլակատներ, Երևան, 1972

5. Յուզբաշյան Յու.Վ., Վեյս Պ. Ֆ., Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը, 33 պլակատներ, Երևան, 1982

6. Յուզբաշյան Յու.Վ., Մկրտչյան Ա.Շ.,՝Երաժշտությունն առաջին դասարանում՝ մեթոդական ձեռնարկ, Երևան 1986

7. Յուզբաշյան Յու.Վ.,՝Երաժշտության այբուբեն՝ դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի համար, Երևան՝Լույս՝, 1987